ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 03 » հուլիս 2026թ. No 3923 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/3446-26 առ 01.07.2026թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 3 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղրյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2026 թվականի հուլիսի «03 » - ի  N3923 - Ա հրամանի

## Գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մեղպորտ | կլոստրիդիում բոտուլինում տոքսին տեսակը Ա | դեղափոշի լիոֆիլացված ներարկման | 150ՄՄ; (1) ապակե շշիկ և (1) լուծիչ ամպուլում 5մլ | ՄԱՍՈՒՆԴԱՐՈՒ Բիոֆարմասյութիքալ Քո, N 659, 6-րդ փողոց, Սիմինդաշտ Ինդուստրիալ քաղաք, Կարաջ- փոշու բալք արտադրող, փոշու առաջնային փաթեթավորող, երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Շահիդ Գհազի, Ֆարմասյութիքալ Քո, Սերում Դարու փողոց, Թավրիզ–Թեհրան ավտոճանապարհի 10-րդ կմ, Թավրիզ, Իրան- լուծիչի բալք արտադրող, լուծիչի առաջնային փոթեթավորող | Իրան | Էսթելայն ՍՊԸ, 25, 11Ա շենք, Կիևյան փողոց, Արաբկիր, 0028, Երևան | Հայաստանի Հանրապետություն | Դ | 24210 30.06.2026 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2 | Մեղպորտ | կլոստրիդիում բոտուլինում տոքսին տեսակը Ա | դեղափոշի լիոֆիլացված ներարկման | 300ՄՄ; (1) ապակե շշիկ և (1) լուծիչ ամպուլում 5մլ | ՄԱՍՈՒՆԴԱՐՈՒ Բիոֆարմասյութիքալ Քո, N 659, 6-րդ փողոց, Սիմինդաշտ Ինդուստրիալ քաղաք, Կարաջ- փոշու բալք արտադրող, փոշու առաջնային փաթեթավորող, երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Շահիդ Գհազի, Ֆարմասյութիքալ Քո, Սերում Դարու փողոց, Թավրիզ–Թեհրան ավտոճանապարհի 10-րդ կմ, Թավրիզ, Իրան- լուծիչի բալք արտադրող, լուծիչի առաջնային փոթեթավորող | Իրան | Էսթեկայն ՍՊԸ, 25, 11Ա շենք, Կիևյան փողոց, Արաբկիր, 0028, Երևան | Հայաստանի Հանրապետություն | Դ | 24211 30.06.2026 |
| 3 | Մեղպորտ | կլոստրիդիում բոտուլինում տոքսին տեսակը Ա | դեղափոշի լիոֆիլացված ներարկման | 500ՄՄ; (1) ապակե շշիկ և (1) լուծիչ ամպուլում 5մլ | ՄԱՍՈՒՆԴԱՐՈՒ Բիոֆարմասյութիքալ Քո, N 659, 6-րդ փողոց, Սիմինդաշտ Ինդուստրիալ քաղաք, Կարաջ- փոշու բալք արտադրող, փոշու առաջնային փաթեթավորող, երկրորդային փաթեթավորող, որակի և բաց թողնման հսկող, Շահիդ Գհազի, Ֆարմասյութիքալ Քո, Սերում Դարու փողոց, Թավրիզ–Թեհրան ավտոճանապարհի 10-րդ կմ, Թավրիզ, Իրան- լուծիչի բալք արտադրող, լուծիչի առաջնային փոթեթավորող | Իրան | Էսթեկայն ՍՊԸ, 25, 11Ա շենք, Կիևյան փողոց, Արաբկիր, 0028, Երևան | Հայաստանի Հանրապետություն | Դ | 24212 30.06.2026 |